Եւ յաւագ հինգշաբթի յետ կէս աւուրն այլ գանկակ չի քաշեն մինչ զատկի ճրագալու-
125 ցին, զի սուգ է. եւ տէլալնին կանչեն, թէ ասսի մինչ միւս հինգշաբթին այլ զատ եւ իրաւունք չի լինի, այլ փակին տիւանք եւ իրաւանց տեղիք: Այլ եւ հրամանք է յարքունուսա, զի մի ոք յաւուրսն յայնոսիկ մարմնա-
130 ւոր իրս կամ գործս զբաղեսցի, այլ միայն եկեղեցիս գնալ, աղօթից եւ քարոզից ունկն դնել, զի այն օրերն ամէն եկեղեցիք իրեք չորս անգամ քարոզ կու լինի:

Իսկ այս շաբաթս (տօնից) եղկելի Հրեայքն բնաւ չերեւին (ի հրապարակս). այլ եւ թագչին յամուրս եւ ի տունս փակին. այլ եւ զինուորս դնեն պահապան դրանցն՝ վասն ահի եւ երկիւղի քրիստոնէից: Բայց այնու եւս ոչ գերծանին, այլ մեծ ՀԼասս կրեն ի սառուտէն-
140 գից, որք են սօխթայք. միարանին ի միասին բաղումք եւ երթան ի փողոցս եւ ի հրապարակս եւ ի տունս Հրէից, պատեն եւ բաղում ՀԼասս գործեն, զոմանց գրունս կործանելով, զայլոց զտունս, կիսոց զպատուհանս խոր-
145 տակելով. եւ զորս զտանեն չարչարեն, թալնեն, եւ զայլս սպանանեն: Եւ զայս սովորութիւնս ունին Հռոմայեցիք ի նախնեաց՝ առնուլ վրէժն Քրիստոսի, որպէս երբեմն կայսրն Ուստիանոս, Տիբերիոս, Տիտոս եւ Վեսբիա-

127 յիրաւունք: — 128 յիրաւանց: — 130 սպաղեսցի: — 132 դրնել: — 135 հրէայք: — 138 յերկիւղի: